

Մարզպետն այցելեց համայնքներ

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը մայիսի 10-ին այցելեց մի շարք համայնքներ: Նա եղավ Պարտիզակում, Արագածոտնում եւ Նոր Եղեսիայում: Սրանք այն համայնքներն են, որոնք գտնվում են Արզնի-Շամիրամ ջրանցքի համեմատաբար ծայրամասային հատվածներում, եւ առկա խնդիրներն էլ պայմանավորված են, հիմնականում, այդ հանգամանքով:

Բնակիչների հետ հանդիպումների ընթացքում մարզպետն առանձնակի կարեւորեց ոռոգման ջրի խնդիրը, նշելով, որ այդ հարցը իրենց գործունեության մեջ առաջնային տեղ ունի: Բնակիչներն, ընդհանուր առմամբ գոհ էին վերջին մեկ տարում իրենց համայնքներին ին տրվող ոռոգման ջրից եւ ասացին, որ եթե այս տարի էլ նույնքան ջուր ունենան, իրենք բավարարված կլինեն: Մարզպետը վստահեցրեց, որ այդ հարցում ոչ միայն նշված համայնքներում, այլեւ մարզում, ընդհարնապես, խնդիր չի լինի:

Հանմայնքների ղեկավարների եւ ԶՕԸ-ի ղեկավար Սարգիս Սարգսյանի հետ մարզի ղեկավարը ամփոփեց ջրամատակարարման հետ կապված գործնական քայլերի ընթացքը: Քննարկվեցին նաեւ համայնքների զարգացման առաջիկա հեռանկարներին, նախատեսվող ծրագրերին վերաբերող խնդիրներ: